

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԱՌԱՎՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳՐԱԲԱՐՈՒՄ

ԷԳ. Ս. ՄԿՐՏՁՅԱՆ

Լեզվի շարահյուսական յուրահատկությունները առավելագույնս դրսևորվում են նախադասության մեջ: Դա բացատրվում է նրանով, որ նախադասությունը մտքերի արտահայտման միջոց է, որը կապ ունի մտածողական բարդ աշխատանքի հետ, որի արդյունքները բազմազան են և անսահմանափակ, հետևապես նրա դրսևորման միջոցներն էլ բազմաբնույթ են, քերականական գործառույթներով՝ հարուստ:

Այս տեսակետից դիտարկելով գրաբարի նախադասությունները՝ նկատում ենք, որ դրանք բազմակառույց են. գլխավոր հատկանշի՝ ստորոգման արտահայտությամբ բազմաձև են և ինքնատիպ, որպիսի առանձնահատկություններով էլ զանազանվում են հայոց լեզվի հաջորդ փուլերի համապատասխան կառույցներից:

Գրաբարի պարզ նախադասության շարահյուսությունը հնարավոր չէ քննել զուտ պարզ նախադասության օրինակով. դա հնարավոր է միայն պարզ և բարդ նախադասությունների համադրումով, նրանց փոխկապակցությունների հաշվառումով, որովհետև շարահյուսական բազմաթիվ երևույթներ կարելի է ճանաչել և բնութագրել միայն բարդ նախադասության մեջ, պարզ և բարդ նախադասությունների զուգադրման, նրանց միավորների բաղդատման և քերականական այլ միջոցների եղանակով:

Ուստի անհրաժեշտ է վկայել բնագրային փաստեր, դրանք դասդասել, խմբավորել ըստ շարահյուսական էական հատկանիշների և այդ դաշտի վրա բնութագրել համապատասխան միավորներն ու նրանց առնչվող հասկացությունները, կառուցվածքային և քերականական առանձնահատկություններն ու յուրահատկությունները:

Արդ՝ նախադասության կառուցվածքային տարբեր խմբերի օրինակներ՝ համապատասխան բնութագրություններով ու վերլուծություններով:

- ա). 1. Իսկ Շապուհ գայ հասանէ ի Տիգրանակերտ մեր քաղաք (Խ., 346):
2. Հայոց թագաւորէ Արտաւազդ որդի Տիրանայ (Խ., 158): 3. Իբրև ետես թագաւորն Հայոց՝ ցնծացեալ ել ընդ առաջ նորա և մեծաւ խնդութեամբ ընկալաւ զնա. մանաւանդ իբրև կեղծաւորութեամբ և դաւով սկսաւ խօսել ընդ նմա և զիրոյ գալոյն հաւատարմութիւն ցուցանել (Ագ., 30): 4. Չուէր այնուհետև ամբարապետն Վեհդենշապուհ հանդերձ քահանայիւքն ի նիւշապհոյ, ի վեցերորդ ժամու աւուրն, ընդ ճանապարհն որ ելանէ ի Վրկանն (ՂՓ, 226): 5. Առ Սերուբաւ եղև, ասեն, սկիզբն հեթանոսութեան (Եզն., 188): 6. Յորժամ նստիս ի սեղանն, խոնարհեցո՛ր՝ զգլուխդ. մի՛ այլ ինչ տեսաներ, բայց միայն զքեզ. և ճաշակեա՛ր գոհութեամբ (Եզն., 254):

Այս խմբում կառուցվածքային առանձնահատկություն շունեցող նախադասություններ են. սրանք հայերենի բոլոր շրջանների համար ընդունելի, գոր-

ծածական, կարելի է ասել, սովորական կառուցվածքի են (այստեղ նկատի չենք ունենում շարադասական, համաձայնության, նախադասության անդամների արտահայտության՝ նախդիրներով, նախադրություններով ձևերն ու այլևայլ երևույթները): Օրինակ՝ «Իսկ Շապուհ գայ հասանէ ի Տիգրանակերտ մեր քաղաք» և «Իսկ Շապուհը գալիս հասնում է մեր Տիգրանակերտ քաղաքը» տարբերակները կառուցվածքային հակադրություն չեն: Այս խումբը մյուսներին հակադրվում է նրանով, որ եթե սա բնորոշ է բոլոր շրջանների համար, ապա մյուսները բնորոշ են գրաբարին (մի մասը՝ նաև միջին հայերենին), իհարկե, կառուցվածքային տարբերություններով ու առանձնահատկություններով:

բ) 1. Իսկ երանելուն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ յունական բարբառոցն ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապետաց սրբոց զեղմարիտ զիմաստութիւնն (4., 31): 2. Ասացեալ ի շօրէ սո խորհրդակալսն խորհրդակատարսն համագործսն՝ լինել լոյս, և անդէն եղեալ լոյսն համասփիւս՝ խաւարակույ օրաբեր (Ագ., 144): 3. Ի մանկութեան տիսն վարժեալ՝ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց քազաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարժունական դիւանին, լինել սպասաւոր արժայատուր հրամանին առ հազարապետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն (4., 9): 4. Եւ ոչ ևս յաւել գիտել զնա (Մնն., ԼԸ, 26):

Այս խումբն առանձնանում է անդեմ կառուցվածքով: Անորոշ և անցյալ դերբայներով կառույցներ են, որոնք ոչ թե նախադասության օժանդակ միավորներ են, այլ՝ նախադասություններ: Գրաբարի քերականները դժվար թե այդպիսի կառույցները չնկատեին: Բազմաթիվ ուսումնասիրություններում, ձեռնարկներում, ատենախոսություններում ըստ ամենայնի ճանաչվել և արժեքավորվել են այդ դերբայներով կապակցությունները. հատկապես նկատի ունենք Ա. Բագրատունու, Վ. Զալբխյանի, Ա. Այտրնյանի, Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Ա. Աբրահամյանի, Ա. Ղազարյանի, Գ. Զահուկյանի, Վ. Առաքելյանի, Վ. Քոսյանի և ուրիշների ուսումնասիրությունները: Ա. Բագրատունու արտահայտությունը՝ «դիմաւոր բայի փոխանակ ինքնին վարող»¹, ստույգ է և սպառիչ անորոշ և անցյալ դերբայների վերաբերմամբ, երբ նրանցով դերբայական նախադասություններ են կառուցվում:

Այսպիսի կառույցների բնորոշ կողմը անկախ գործածությունն է: Ուրեմն անկախ դերբայական կապակցությունը² նախադասության արժեք ունի: Թեև նրանում քերականորեն ձևավորված չեն որևէ ժամկետում հատկանիշը առարկային վերագրելու, դիմային ցուցիչներով արտահայտվող համաձայնություն հերևույթները, սակայն դերբայի չափազանց անկախ գործածության հանգամանքը թելադրում, «պարտադրում է», որ բառակապակցությունը հավասարաթեք դառնա նախադասությանը (որը մենք անվանում ենք դերբայական նախադասություն): Այսպես՝ 3-րդ օրինակում անցյալ և անորոշ դերբայները՝ վարժեալ, եկեալ հասեալ, կացեալ, լինել, սոսկ դերբայական իմաստներով չեն գործածված. նրանցում որոշակի են գործողության կատարման ըմբռնումները, անդիմությունից դիմայնության իմաստին անցած լինելու հանգամանքը, որոնք ուղղակի նշանակում են վարժվել էր, եկել հասել էր, կացել էր, դարձել էր: Սա փոխակերպություն չէ, այլ՝ լեզվական միավորի բնականոն, ազատ գործառություն, լեզվի ներքին օրինաչափությունների դրսևորում:

գ) 1. Եւ դարձեալ արձակեաց զաղանին, և ոչ ևս յաւել դառեալ առ Նա

¹ Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարդացելոց, Վննօրիկ, 1852, էջ 199:

² Տն՝ս էդ. Մկրտչյան, Գերբայական կապակցության և դերբայական նախադասության փոխհարաբերությունը գրաբարում, «Լրաբեր» հաս. գիտ., 1984, № 8, էջ 72:

(Մնն., Ը, 12): 2. Եւ այնչափ յանդգնեալ սատանայութեան ոգւովն, մինչև ի պտտգամաց Հոգւոյն սրբոյ քաղ հանել. զկէս անտարանի բնտրել տոնուլ՝ և զկէսն իբրև գիտտան ի բաց թողուլ նոյնպէս զաւաբելական թղթոցն և զհին կտակարանս ամենեին ուրանալ, որպէս թէ յանզգամէ տուեալ իցեն և ոչ ի բարոյ (Ծգն., 206): 3. Եւ յետ այտորիկ յաւել ևս լինել մարտ խստութեամբ պատերազմի ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս զի ժողովեցան հասին կուտեցան առնուլ զաշխարհն Հայաստան երկրին (Բ., 44): 4. Եւ ոչ միայն այնչափ, այլ և զօրութիւն զգեցոյց նոցա՝ կոխել զզօրս տեառնն իւրեանց. և արկ սուր և բաժինս ի տան նորա, և վառեաց հուր յարարածս նորա, մինչև կարնել և խափանել զօրէնս նորա յաւուրցն Յովաննու Մկրտչի. և անտարանել զիւր արհայութիւնն, արձակեալ քարոզս բազումս՝ քարոզել, և հնձողս բազումս՝ հնձել, զոր ոչ ինքն սերմանեաց (Ծգն., 216): 5. Եկն եհաս Հազարաուխտ ի զօրացն Պարսից, զալ այրեացաւեւ առնել, ի հիմանց տապալել զերկիրն Հայոց (Բ., 228):

Այս խմբում դերբայական կապակցութիւնները թեև անկախ են, բայց յուրահատուկ դրսևորումներ ունեն. բարդ նախադասութեան բաղադրիչ են՝ համադաս, զխափոր կամ երկրորդական նախադասութիւնների գործառույթով³: 1-ին և 5-րդ նախադասութիւններում դերբայական կապակցութիւնները համադաս նախադասութիւնների արժեքով են, այսինքն՝ բարդ համադասական նախադասութեան բաղադրիչներ են: 3-րդ օրինակում դերբայական կապակցութիւնը զխափոր նախադասութիւն է, 2-րդ և 4-րդ օրինակներում՝ երկրորդական: Քերականները նկատել են, որ որոշ բառերից հետո գործածվում են դերբայական կառույցներ, որոնք այլ բան չեն, եթե ոչ երկրորդական նախադասութիւններ: Չալըխյանը նշում է, որ մի քանի մակբայներից հետո գործածվում է նաև «լոկ անցելով (ինչպէս նաև աներևութով) իօսք մը լրացեալ»⁴: Այդպիսի կառույցներով օրինակներ են բերվում՝ գործածված յորժամ, զիարդ, իբրև մակբայներից և մի քանի շղկապներից հետո. Յորժամ հարաւ շնչեալ՝ ասէք թէ խորշակ լինի: Զիարդ մանուկն ի հասակ անցեալ, ապա ի ծերութիւն դարձեալ: Գուցէ՛ կարծիս ինչ տայցէ թագաւորին՝ իբրև դառն ինչ ի նմանէ զայրն վնասեալ: Եւ վասն զի ոչ կանխեալ զիտացեալ ձեր զարժանն. վասն այնորիկ ած զարժան գաւազանն ի վերայ:

Ստ. Մալխասյանցը նույնպիսի կարծիք է հայտնում մինչև բառին հաջորդող կառույցի մասին: «Մինչև-ի մօտ երկրորդական նախադասութեան դիմաւոր ստացուածը փոխում է անորոշ դերբայի»⁵, — դրում է նա: Իհարկե, այդ բառը նման կապակցութիւններում համարում է նախադրութիւն, բայց բերված օրինակներում ճիշտ է շղկապական կիրառութիւնը: Ահա այդ օրինակները՝ Միւսն զառիժու կորիւն սնուցեալ ածէ ի համբոյր և ի քծինս՝ մինչև պատել զսնուցանելեան: Հատն մանանխոյ լինի ծառ՝ մինչև զալ թռչնոց երկնից և հանգչել յոստս նորա⁶:

դ) 1. Այլ նա աւասիկ իբրև զկառս իմն լծեալ ի շորից երկվարաց զաշխարհս տեսանեմք (Ծգն., 14): 2. Եւ ձգեաց Աբրահամ զձեռն իւր առնուլ ըզսուրն և զննուլ զորդին իւր (Մնն., ԻԶ, 10): 3. Եւ յայտ արարեալ աշակերտացն զմիակամութիւնն իւր ընդ շօր՝ և ապա իչանէ ի լեռնէն, փութացեալ վասն անհաւատիցն դնել զանձն. մանաւանդ յորժամ ի տօնն էկելոց հեթանոսացն աղաչել զաշակերտսն՝ երթալ ընդ նոսա առ Յիսուս (Ագ., 256): 4.

³ Հմմտ. անդ:

⁴ Վ. Չալըխյան, Քերականութիւն հայկազգեան լեզուի, աշխատասիրեալ ի հ. Արսենէ վ. Այտրեան, Վիեննա, 1885, էջ 430—431:

⁵ Ստ. Մալխասեանց, Գրարարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 134:

⁶ Անդ:

Համարձակութիւն առին հարցանելոյ զՏէրն ի Ձիթաստանեաց լերինն, յորժամ վասն քակելոյ գեղեցիկ տանաւին վնիռ ետ (անդ, 258): 5. Եւ զսակաւս ի գեղէն յաւագ նախարարացն գործակից իւր թողեալ, բռնանայր ի վերայ՝ ունելով զթագաւորանիստ տեղիսն (Ե., 160):

Այստեղ բնորոշը դերբայական կապակցութիւնների կախյալ գործառութիւնն է: Անորոշ և անցյալ դերբայներով կառուցները (չեն բացառվում մյուս դերբայներով կառուցները) նախադասութիւն անդամների պաշտոն են կատարում (կարող են լինել նաև վերադիր, նախդրի կամ նախադրութիւն խընդիր): Ուրեմն այսպիսի կառուցները նախադասութիւն արժեք չունեն, կախյալ դերբայական կապակցութիւններ են?:

Բ) 1. Նոյնպէս կարծի և զսատանայէ՝ նախանձելն նմա ընդ նախաստեղծ մարդոյն, և չգիտել զհանգամանս վնասակարութեանն (Եզն., 38): 2. Դաւիթ գալոց է՝ շինել զԾրուսադէմ և ժողովել զՀրէայս, և անդ թագաւորել նմա նուցա (անդ, 86): 3. Եւ յառաջ մատուցեալ զբանս իւր ասէ, թէ ի հաստատել Տիտանեանն Բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, զալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ (Խ., 40—42):

Այս խմբի առանձնահատկութիւնն այն է, որ նախադասութիւն մէջ կազմավորված է մի անդամ կառուց՝ տրականը անորոշի հետ⁸, որը դերբայական կապակցութիւն է՝ կազմված անորոշ դերբայ-ստորոգյալով ու տրական հոլովով ենթակայով, և նախադասութիւն արժեք ունի: Օրինակ՝ 3-րդ նախադասութիւն ընդգծված կապակցութիւնը նշանակում է՝ այնտեղ նա (նմա) թագավորելու է (<թագաւորել) նրանց:

գ) 1. Եթէ զամենայն զԱստուած յամենայնի ի հիւղն լինել ասիցեն, որչափ մեծ ևս ասիցեն զԱստուած, գտանի հիւղն մեծ քան զնա (Եզն., 20): 2. Զի ասէին զնա այր ընտիր լինել և համեստ յամենայնի, այլ և ի ցանկութիւնս մարմնոյ իբրև զօրինաւոր ոք (Խ., 234): 3. Եւ զի քան զամենայն բնակեալս ի վերայ երեսաց երկրի խաղաղասէր ասեն զոլ զագգն ձեւաց (անդ, 270): 4. Եւ ասէին զոգցես յերկրին Հայկազեանց զայս լինել [ՀՀ, 7-րդ (1-ին), 430]:

Այս խումբը բնորոշ է անորոշ դերբայի մեկ այլ գործառութիւնով. ասացական բայի պահանջով կառուցվում է դերբայական կապակցութիւն, որտեղ անորոշ դերբայ-ստորոգյալի հետ գործածվում է հայցական հոլովով ենթական: Այսպիսի կառուցները կոչվում են հայցականը անորոշի հետ⁹ և քիչ են տարածված:

է) 1. Բայց մարդոյ առեալ զանձնիշխանութիւն, ում կամի՝ ծառայանայ (Եզն., 34): 2. Նոյնպէս և սողնոցն զխօշիւն միայն զմարդոյն առեալ, է որ ի ծակս, է որ ի սորս, է որ ընդ փապարս երկրի մտեալ ղողեն (անդ, 118): 3. Եւ զայն տեսեալ թագաւորին Պարսից և ամենայն մեծամեծաց դրսն և մոգուցն՝ նուէրս ազգի ազգի բազում խնդութեամբ մատուցանէին աստուածոց իւրեանց (ՂՓ, 124): 4. Եւ զայս լուեալ թագաւորին՝ ոչ կապանօք, այլ արձակ ոտիւք և արձակ ձեռքօք հրամայեաց առ ինքն կոչել (Ե., 266): 5. Իսկ Արամանեկայ առեալ զամենայն բազմութիւնն՝ խաղայ յարևելս հիւսիսոյ (Խ., 46):

⁷ Հմմտ. անդ, էջ 70—71:

⁸ Տե՛ս էղ. Մկրտչյան, Տրական հոլովով ենթական գրաբարում («Պատմարանասիրական հանդես», Եր., 1967, № 2—3, էջ 237—245) և հմմտ. Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, 1964, էջ 428:

⁹ Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմութիւն, Եր., 1961, էջ 400, էղ. Ս. Մկրտչյան, Հայցական հոլովով ենթական գրաբարում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտութիւնների», Եր., 1967, № 6, էջ 49—56):

6. Այա զայրացեալ Վնամայ, ի մեծի հրապարակին արաբեալ քննութիւն, և ոչ դնելով ունկն Արտաշրի՝ յօժարութեամբ լսէր շարախօսացն (անդ, 434):

Նախադասութիւնների այս տեսակը գրաբարում լայն տարածում ունի: Անցյալ դերբայով կառուցված կապակցութիւնը տարբերվում է նշված կախյալ և անկախ դերբայական կապակցութիւններից. սա ոչ մեկն է, ոչ մյուսը և նրանց հակադրվում է մի յուրահատկութեամբ՝ դառնալով, կարծեք, երկուսի միջինը: Կապակցութիւնը մի կողմից թեև անկախ նախադասութեան արժեք ունի, սակայն անկախ չի գործածված, մյուս կողմից, թեև նախադասութեան կազմում է, սակայն ամբողջութեամբ կախյալ միավորի դերում չէ: Այդ պատճառով էլ այդպիսի կապակցութիւնները պայմանականորեն անվանում ենք կիսանկախ դերբայական կապակցութիւններ¹⁰: Այսպես՝ 3-րդ օրինակում ընդգծված կապակցութիւնը նախադասութեան արժեք ունի (պարսից թագավորը, արքունի բոլոր մեծամեծերը և մոգերը տեսան այն), սակայն անկախ չի գործածված և միաժամանակ կապվում է նախադասութեան երկրորդ բաղադրիչի հետ՝ մասնակիորեն կախված լինելով մատուցանելին բայ-ստորոգյալից: Անցյալ դերբայով այսպիսի կառուցը քերականները ճանաչում են և գրաբարին բնորոշ համարում: Վ. Զալըխյանի օրինակներից¹¹ Տեսեալ մարդկան գծիծառքն՝ նովաւ ճանաչեն զհասանեալ գարնայնոյն: Նորա ընկեցեալ գծոսն իւր՝ եկն առ Յիսուս: Բրտի լմեալ զկակուղ կաւն՝ ստեղծանէ անօթ (ընդգծումները մերն են — է. Մ.): Ստ. Մալխասյանցից¹² Եւ միոյն յարուցեալ զմիւսն սպանանիցէ: Եթէ որդոյ իւրոյ սուր առեալ ի վերայ խաղայցէ՝ մի՛ լիցի նմա մեղադիր: Ա. Բագրատունուց¹³ Չու արաբեալ Աբրամու եկն բնակեցաւ առ կաղընուչն: Իմ զձեռ արծաթն առեալ և հաճեալ եմ: Արաբեալ ժողով ճրէիցն նըզովեցին զանձինս: Կամ թէ քո՞ տեսեալ զհողն կաւ՝ ստեղծեր կենդանի: Գ. Ավետիքյանից¹⁴ Զշարն՝ շար ասէ՝ որոյ զնոյն ստացեալ ունիցի (Առակ. Ի. 14): Յորմէ բոլոր բարեսիրացն խուսափեալ փախչին (Պիտ. 209):

Կարծում ենք, վերոբերյալ օրինակներն էլ բավարար չափով համոզում են, թե որքան տարածում ունեն, նույնքան էլ ճանաչված և բնութագրված են քերականների կողմից (այլապես կարելի էր դիմել նաև մյուսների վկայութիւններին):

ը) 1. Զի եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանս յինչ և կամէր. այլ որպէս մարդոյ ոչ է հնար փոխել ի կերպարանս ինչ՝ յոր և կամիցի, նոյնպէս և վիշապին (Եզն., 84): 2. Արդ եթէ շար ինչ էին գազանքն բնութեամբ, շէ հընար վնասակարացն ընդ իւրեանց վնասակարին ընտելութիւն ունել (Եզն., 56): 3. Այլ զականց և զմարգարտաց ոչ ասեն գիտել զհամար մեծամեծացն. իսկ պատուականքս առ մեզ զգեստուց և սակաւուց ագանելիք՝ հասարակաց նոցա է զգեստ (Խ., 270): 4. Մեզ դոցա պատասխանի այնքան պարտ է առնել՝ որչափ արար պատասխանի Փրկիչն Պիղատոսի յատենին (ՂՓ, 238):

Ընդգծված կառուցները դարձյալ ձևավորվում են անորոշ դերբայով, որը հարադրվում է միադիմի բային (պարտ է, մարթ է, արժան է, հնար է...) և տրական հոլովի հետ կազմում յուրատեսակ նախադասութիւն: Միադիմի բայի իմաստի թելադրանքով այդպիսի նախադասութիւնները ստանում են զանազան երանգավորումներ՝ կարելիութիւն, պարտավորութիւն, անհրաժեշտութիւն, հնարավորութիւն և այլն: 2-րդ օրինակում ընդգծված նախադասու-

¹⁰ Էդ. Մկրտչյան, Գերբայական կապակցութեան..., էջ 71:

¹¹ Վ. Զալըխյան, նշվ. աշխ., էջ 213:

¹² Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 36—37:

¹³ Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 248:

¹⁴ Գ. Ավետիքեան, Քերականութեան հայկական, ի վեներիկ, 1815, էջ 468:

թյան մեջ մեզ հետաքրքրող կառույցը ձևավորվում է հնար է միադիմի բայի ժխտականով՝ չէ հնար, հարադրական բայի անորոշ դերբայով՝ ընտելութիւն ունել (ընտելանալ) և վնասակարացն հոգնակի տրականով, որոնք միասին նշանակում են՝ հնարավոր չէ/չէր լինի, որ վնասակարները ընտելանային (իրենց համար վնասակար եղողի հետ): 4-րդ օրինակում ձևավորում են պարտ է միադիմին, պատասխանի առնել անորոշը և մեզ հոգնակի տրականը (մենք պետք է պատասխանենք): Սա ևս բավականին տարածված կառույց է:

թ) 1. Անդ էր տեսանել շտապ մեծի տազնապին և զաղէտս սնրուս տարակուսանացն երկոցունց կողմանցն (Ծ., 236): 2. Անդ էր տեսանել զբեկումն նիզակսոցն և զխորտակումն աղեղանց (Ծ., 238): 3. Անդ էր տեսանել այր բնկերի արեամբ ծարաւեալք ըմպելով [ՀՀ, 3-րդ (1), 86]: 4. Անդ էր տեսանել կոտորած անհնարին զզնդին Երուանդայ [ՀՀ, 7 (1), 122]: 5. Անդ էր տեսանել նոր զոմն Ողիսուս (անդ): 6. Անդ էր յիշելի և մարգարէականն (Կ., 20): 7. Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն (Կ., 19): 8. Բայց է ճշմարիտ, որպէս և այժմ իսկ է տեսանել ի զարմս Ամատունեաց (Խ., 224): 9. Բայց մեզ դեռ կայ պատմել ձեզ՝ զճնունդ Աստուածորդոյն որ ի կուէն. թէ զիս՝ որ եղև, մի ըստ միոջէ պատմեսցուք (Լ., 216):

Առհասարակ անորոշ դերբայով՝ առանձին գործածութեամբ, կամ անորոշ դերբայով ձևավորված կապակցութիւններով, որոնք կարող են ուղեկցվել այս կամ այն ճեբրականական ձևերով¹⁵, հնչերանգային ելեէջներով, գրաբարում ստեղծվում են յուրատեսակ կառույցներ, ոճեր, որոնք նախադասութեան բնութագրման, վերլուծութեան համար կարևոր են:

Անորոշ դերբայի հետ էական բայի շեշտվածութեամբ ստեղծվում է ինքնատիպ կառույց՝ կարելիութեան, հնարավորութեան, անհրաժեշտութեան երանգներով: Այսպես՝ անդ էր տեսանել, իսկ է տեսանել, մեզ կայ պատմել և նման կառույցները սովորական երանգով չեն. անդ էր տեսանել = այնտեղ կարելի էր տեսնել, այնտեղ պետք էր տեսնել, իսկ է տեսանել = հենց պետք է տեսնել, իրավ պետք է տեսնել, մեզ կայ պատմել = մենք պետք է պատմենք, մենք կպատմենք: Տվյալ դեպքում հնչերանգի ուժղնութեամբ տեղի է ունենում իմաստի սաստկացում, որն ավելի է ճշգրտում, որոշակիացնում նախադասութեան իմաստը: Եթե անդ էր տեսանել-ը թարգմանենք այնտեղ էր տեսնել ձևով, ապա վերջինս տարտամ իմաստ կունենա: Ուրեմն անհրաժեշտութիւն է զգացվում՝ խորապես ճանաչել կառույցը, որովհետև նախադասութեան բովանդակութեան հարցում ոչ պակաս դեր ունի: Բացի էական բայից, անդ մակբայը ևս օժանդակում է երանգի սաստկացմանը: Ընդ որում, անդ էր արտահայտութեանը կարող է հաջորդել ոչ միայն անորոշ դերբայը, այլև՝ ուրիշ բառեր՝ անդ էր յիշելի, անդ էր ուրախութիւն, տեսիլ և այլն: էական բային փոխարինում է նաև կայ բայը, ինչպես 9-րդ օրինակում է՝ մեզ կայ պատմել:

ժ) 1. Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրումն, մի ի նախարարացն նահապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր, զորմէ կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և պարկեշտութեամբ (Բ., 182): 2. Զի որ անմարմին ոք է, նա անսերմն է. վասն զի սերմն մարմնաւորաց է, և ոչ անմարմնոց (Եզն., 82):

Այս խմբի նախադասութիւնները նույնպես գրաբարին բնորոշ կառույցներ են, որոնք միայն կարելի է համարել համաժամանակյա խոսքի տարբերակված դրսևորումներ: էական բայը սեռական հոլովի մոտ բուն իմաստից

¹⁵ Քերականները այդպիսիք են համարում շրջումը, ավելադրությունը, զեղումը, արտոնությունը և բակառությունը (տե՛ս Վ. Զալըխեան, ելզվ. աշխ., էջ 461—462, Գ. Անտիֆեան, ելզվ. աշխ., էջ 324—325):

«շեղվում», այլ իմաստով է հանդես գալիս՝ ունենալ է նշանակում: Օրինակ՝ Անդովկայ էր = Անկովկի կար՝ Անդովկն ունեւ (էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ = Անդովկը մի գեղեցիկ դուստր ունեւր). (սերմն մարմնաւորաց է = մարմնավորները սերմ ունեն): Այդպիսի կիրառութեամբ կարող են հանդես գալ նաև գոյ (գոյ), կայ, շիբ բառերը:

ԺԱ) 1. Եւ վերանալն և բարձրանալն՝ զի էջ ի խոնարհութիւն մարմնովն. վասն այնորիկ նորին խոնարհութեան մարմնոյն կերպարանօք բարձրանայ (Ագ., 226): 2. Այլ ինքն է պատճառ ամենայնի, որ ի լինելն և ի գոյանալ եկին ի շոյէ և ի գոյէ. որպէս երկինք վերինք և որ ինչ յերկինս, և երկինք երեկինք որ ի ջուրց, և երկիր, և ամենայն ի նմանէ և ի նմա. յարմէ ամենայն, և ինքն ոչ յումեմէ (Ծգն., 6): 3. Քանզի ոչ եթէ կարօտ ինչ ոք իւրք էր, եթէ վասն այնորիկ խնայիցէ՝ իւր միայն սեպհականեալ զկենդանութիւնն. և անգօր և տկար, եթէ զանձին և եթ պահիցէ զգօրութիւնն. և ոչ նուազ ի գիտութենէ, եթէ ինքեան և եթ պահիցէ զգիտութիւնն. և ոչ կարօտ յիմաստութենէ, եթէ յորժամ այլոց բաշխիցէ զիմաստութիւնն իւր. կարծիք ինչ կարօտութեան ի ներքս մտանիցեն (անդ, 8): 4. Ոչ սկիզբն առեալ յումեմէ լինել Աստուած, այլ ինքն ինքեամբ մշտնջենատւ. ոչ ի տեղւոջ ուրեմ, այլ ինքն ինքեան տեղի. ոչ ի ժամանակի իմիք, այլ ժամանակք ի նմանէ գոյացան. և ոչ միայն քան զերկինս երիցագոյն, այլ և քան զկարծիս մտաց մարդկան և հրեշտակաց (Ծ., 58—60):

Այս խմբի նախադասութիւնները կառուցվածքային հատկանիշներով միօրինակ չեն: Առանձին նախադասութիւններ դարձյալ անորոշ, անցյալ դերբայներով հետաքրքրական կառուցներ ունեն, սակայն այս դեպքում դա չէ, որ ուշադրութիւն է գրավում, այլ մեկ ուրիշ երևույթ, որ կարծես համընդհանուր է բոլոր օրինակներին. խոսքը վերաբերում է գեղջման քերականական ձևին, որը գրաբարում (և ոչ միայն գրաբարում) շփազանց տարածված և ուշագրավ երևույթ է, իսկ նախադասութեան կառուցվածքն ու բովանդակութիւնը ճշմարիտ ըմբռնելու, այսինքն՝ նրա տեսակներն ու բաղադրամասերը որոշակի դարձնելու համար՝ շատ կարևոր:

Արդ՝ ի՞նչ է զեղջումը և ինչ գործառութիւն ունի հիշյալ խմբի օրինակներում: «Զեղջումն,— գրում է Գ. Ավետիքյանը,— յուն. էլլիփսիս, այսինքն պակասումն ասի՝ յորժամ գիր ինչ կամ բառ թողեալ է, բայց լոբեխայն կամ զօրութեամբ իմանի. զօր. յորժամ պակասի նախդիրն կամ բայն, կամ տէր բային, յատկացեալն, կամ գոյականն, կամ նախադրութիւն ելն»¹⁷: Ուրեմն, հեղինակի կարծիքով, սկսած տառից՝ լեզվի նվազագույն միավորից, մինչև ձևաբանական, շարահյուսական բարդ միավորները կարող են զեղջվել: Ծիշտ է ասված. այդ երևույթը նկատում են նաև ուրիշները: Որքան մեծ են զեղջման գործառութեան սահմանները, նույնքան էլ կարևոր են նրանց առնչվող մեկնաբանութիւնները: 1-ին օրինակի հոմանիշ բայերի անորոշ դերբայական ձևերը գործածված են որոշյալ առումով, առանձնակի՝ առանց խնդրի կամ պարագայի, առանց ստորոգելիական կապի (միայն ձևական կապ կա երկրորդական նախադասութեան հետ), և պարզ է, որ զլխավոր նախադասութիւնն են ներկայացնում՝ ստորոգյալի ամբողջական զեղջումով (վերանալն ու բարձրանալն այն է): Զեղջված է նաև երկրորդական և երկրորդական կարգի նախադասութիւնների ենթական՝ Տէրն, բայց կառույցը ոճի արժեք ունի ստորոգման զեղջումով: Զեղջումը, առանձնապես նրա բնույթն ու եղանակը ներգործում են խոսքի ոճական կառուցվածքի վրա. դա երևում է ստորոգյալի ամբողջական զեղջումից, բայց այն կարող է տեղի ունենալ նաև ստորոգյալի

¹⁶ Հմմտ. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 401, 416.

¹⁷ Գ. Ավետիքյան, նշվ. աշխ., էջ 324.

մասի զեղչման պայմաններում: Այսպես՝ 2-րդ օրինակի ենթակայի և էական բայի (ստորոգյալի հանգույցի) զեղչումով ուշագրավ խոսք է կառուցվել: 10 միավորներից միայն վերջինում զեղչում չկա: Առաջինում զեղչումը չնկատելու դեպքում շփոթ կառաջանա (ո՛վ վերադիրը ենթակա կհամարվի), մի քանի դեպքում և՛ ենթական է զեղչված, և՛ հանգույցը: Եւ անգօր և տկար կապակցության մեջ զեղչված են նա, ոչ էր (նա էլ անգոր չէր, տկար չէր/անգոր ու տկար չէր), և ոչ նուազ ի գիտութենէ կապակցութեան մեջ՝ նա, էր (նա ոչ էլ նվազ էր գիտութունից՝ ոչ էլ գիտութեան պակաս ունէր), և ոչ կարօտ յիմաստութենէ կապակցութեան մեջ՝ նա, էր (նա ոչ էլ կարօտ էր իմաստութեանից՝ կարօտ չէր նաև իմաստութեան): Հնդգծված կապակցութունները համադաս միավորներ են, և զեղչումը նրանցում նույնն է: Իսկ եթե ստորագաս կապակցութեան մեջ դրան ավելանում է զեղչում, ասես այլ կառույց կամ ոճ է առաջանում: Օրինակ՝ 3-րդ նախադասութիւնը շատ ծավալուն է, բազմաթիվ զեղչումներ (հատկապես՝ ստորոգյալի) կան: Բայց ուշագրութիւն են գրավում լրացական կապակցութիւններում եղած զեղչումները, որոնք գրաբարում ոճական առանձին շերտ են կազմում: Որ ինչ յերկինս = ինչ որ կա երկնքում. որ ի ջուրց = որ ջրերից է կազմված: Որ հարաբերականով կազմված այս կարգի կապակցութիւններում զեղչումը քերականները նկատում են: Ի միջի այլոց, Ա. Մեյնս այսպիսի կառույցները համարում է բուն անվանական նախադասութեան մի տեսակ, հարաբերական նախադասութեան կրճատված ձև, որն ունի հնդեվրոպական ծագում և կիրառվում է թե՛ մատենագիրների աշխատութիւններում, թե՛ Աստվածաշնչում: Նա գրում է. «Հնդեվրոպական բուն անվանական նախադասութեան գլխավոր հետքը, որ գոյութիւն ունի հայերենում, հանդիպում է հարաբերական նախադասութիւնների մեջ <...>: Առանց եմ բայի հարաբերական նախադասութիւնը մեծ մասամբ շատ կարճ է. այն բաղկացած է լինում հարաբերական դերանունից և նախդրավոր մի բառից կամ վերաբերականի սեռականից, բայց ոչ թե ածականից կամ ինչ-որ սեռականից»¹⁸: Ապա օրինակներ է բերում Եզնիկից, Փարպեցուց, Աստվածաշնչից (արուեստին որ ի բնութեանն. նահատակութիւնն որ առ Աստուած. ի մէջ ջրորոյն որ ի վերոյ հաստատութեանն, — ընդգծումները մերն են — է. Մ.): Նկատելի է, որ նախադասութեան՝ զեղչման հետ կապված փոփոխութիւնները բազմազան են¹⁹, և մեր մեկնաբանութիւնները դեռևս ամբողջական պատկեր չեն տալիս, կարծում ենք՝ այստեղ հարկ չկա մանրամասների մեջ մտնել. քանի որ նյութի քննութեան ընթացքում էլի առիթ կլինի խոսելու:

ԺԲ) 1. Եւ արդ չէ առողջ մտաց զշարժիչն և զփոփոխիչն թողուլ և շարժնոցն և փոփոխելաց պաշտօն տանել և երկրպագութիւն մատուցանել. զի որ շարժին և փոփոխի՝ չէ էական. այլ կամ լեալ յումեթէ և յիմեթէ, և կամ հաստեալ ի շոյէ: Եւ որ էն և շարժէ զամենայն, ինքն ոչ շարժի և ոչ փոփոխի, քանզի էական է և անշարժական է (Եզն., 10):

Այստեղ էլ գրաբարին բնորոշ երևութիւններ կան, որոնց «կողքով անցնել» հնարավոր չէ, երբ քննում ենք խոսքի կամ նախադասութեան յուրահատկութիւնների հարց. էական բայը տրական հոլովի մոտ մեկ այլ իմաստով է հան-

¹³ Ա. Մեյն, Հայագիտական ուսումնասիրութիւններ, Եր., 1978, էջ 426:

¹⁹ Արդի հայերենի ուսումնասիրութիւններում, ուսումնական ձեռնարկներում քերի նախադասութիւն է կոչվում զեղչված ենթակայով կամ ստորոգյալով (նաև այլ անդամներով) նախադասութիւնը (հմմտ. Հայոց լեզու, Բ, Եր., 1975, էջ 293—304): Այդպես է նաև գրաբարում: Թերի նախադասութիւնը առանձին չենք քննում հետևյալ նկատառումներով՝ ա) առանձին քերչնելով է ենթակայի և ստորոգյալի զեղչումը, որը ինքնին առնչվում է թերի նախադասութեանը, բ) թերի նախադասութիւնը կապ ունի նաև բարդ նախադասութեան հետ, հետևապէս կարելի է քննել նաև նրա հետ կամ առանձին և գ) տեղի սղութեան պատճառով:

դեա գալիս՝ բնորոշ, հատկանշական է նշանակում: Այսպես՝ չէ առողջ մտաց = առողջ մտքին բնորոշ կամ հատկանշական չէ (չէ առողջ մտաց զշարժիչն և զփոփոխիչն թողուլ = առողջ մտքին հատկանշական չէ շարժողին և փոփոխողին թողնել): Նույն նախադասութեան մեջ 2 կապակցութիւններ՝ որ շարժին և փոփոխի, որ էն և շարժել, զամենայն, կատարյալ գրաբարյան կառուցցններ են, որոնցում, բացի զեղումից, հողի գործածութիւն կա, որի անտեսումը կարող է քերականական ձևերի շփոթ առաջացնել: Ն հողը դրվում է դիմավոր ձևերի վրա (շարժին, էն)՝ որ հարաբերականի պատճառով (պետք է լիներ որն շարժի, որն է)՝ մի դեպքում առաջացնելով համանունութիւն (շարժին = շարժվում են, և շարժին = նա, որ շարժվում է), մյուս դեպքում՝ հոգնակիի տպավորութիւն, թեև ուղղագրական տարբերակները այլ բան են հուշում (են = կան, էն = նա, որ կա): Ուրեմն՝ որ շարժին և փոփոխի = նա, որ շարժվում է և փոփոխվում. որ էն և շարժել զամենայն = նա, որ կա/գոյութիւն ունի և շարժում է բոլորին կամ բոլորը: Այստեղից հետևում է, որ նախադասութեան կառուցվածքի հարցում մեծի և փոքրի խնդիր չկա, այլ պետք է ընդունել, որ ամեն երևույթ իր դերն ու նշանակութիւնն ունի, ամեն միավոր (հասկացութիւն) հույժ կարևոր է և, անշուշտ, ուշադրութեան արժանի: Մեր կարծիքով, միայն այս ըմբռնումով և այսպիսի մտեցումով կարելի է գրաբար նախադասութիւնը ճիշտ հասկանալ, բնութագրել ու վերլուծել:

ԺԳ) Նախադասութեան կառուցվածքային խմբերի մեջ կարելի է ընդգրկել նաև միակազմ նախադասութիւններ²⁰, որոնք մեկ ընդհանրութիւն ունեն. նախադասութեան միջուկների՝ ենթակայի և ստորոգյալի բեռացված հասկացութիւնները բառի ձևով («բառապէս») չեն արտահայտված: «Մենք փաստորեն գործ ունենք միայն ստորոգյալի հետ, որի ենթական լեզվականորեն չի տրված»²¹, — գրում է Գ. Զահուկյանը:

Ուրեմն՝ ստորոգյալն արտահայտվում է.

ա) բայի եզակի 3-րդ դեմքով, որ նշանակում է բնութեան երևույթ (ներսեմացաւ, տեղացաւ, լուսանայր, ոչ երեկոյանայ և այլն):

Օրինակ՝ Ի միջօրեայն նսեմացաւ (= մթնեց/նշմ, հ. 2-րդ, 454):

բ) բայի հոգնակի 3-րդ դեմքով:

Օրինակ՝ Դոմեստ զոմն ասեն եկեալ, որ է ինքն կայսրն Դոմեստիանոս (Խ., 222): Նա բնաւ իսկ, ասեն, յետ թիրելոյ սատանայի և խաբելոյ զմարդն՝ ընդէ՛ր իսկ որ եբարձ ի միջոյ (Եզն., 46): Եւ ասէին զոգցես յերկրին Հայկազանց զայս լինել [ՀՀ, 7 (1), 430]: Զորմէ յառասպելս ասեն. «Հատուած գրնացեալ <...>» (անդ):

գ) բայի եզակի 2-րդ դեմքով:

Օրինակ՝ Զղաշտն արևելից գոգցես իմն իբրև որսայսեալ, ձիգ յարեգակն կոյս զերկայնութիւն պարզեալ (անդ): Որ բազմաց կորստեան պատճառ լինի, զնա զի՛նչ ասես (ՀՀ, 1, էջ 432):

դ) անորոշ դերբայով:

Օրինակ՝ Աբգար արքայ Հայոց, տեառն իմում Տիբերի կայսեր Հռոմայեցոց խնդալ (Խ., 178): Տիբերիոս կայսր Հռոմայեցոց, Աբգարու թագաւորի

²⁰ Արդի հայերենի միակազմ նախադասութիւնները մանրամասն ուսումնասիրված են Ս. Գյուլբուրաղյանի (տե՛ս Միակազմ նախադասութիւնները ժամանակակից հայերենում, Եր., 1967), Վ. Առաքելյանի (տե՛ս Հայոց լեզու, Բ (2-րդ մաս), Եր., 1975, էջ 276—291), Ս. Աբրահամյանի (տե՛ս ժամանակակից հայերենի քերականութիւն, Եր., 1975, էջ 317—341), Ռ. Խլիանյանի (տե՛ս Արդի հայերենի շարահյուսութիւն, Եր., 1986, էջ 300—307) և ուրիշների կողմից:

²¹ Գ. Զահուկյան, Ստորոգումը և նրա արտահայտութեան միջոցները («Հայոց լեզուն և գրականութիւնը դպրոցում», Եր., 1985, № 1, էջ 30—32):

Հայոց խնդրալ (անդ, 180); Աբգար արքայ Հայոց, որդւոյ իմում ներսեհի խընդալ (անկ, 182):

Այստեղ ստորոգումն արտահայտւում է հնչերանգով. խնդալ անորոշը կառուցում հնչերանգ, ելևէջում ունի, ինչպես ողջոյն բառը: Օրինակ՝ Քաջ արանց խոսրով արքայ. ստրատելատիդ Գազաւոնի և ամենայն նախարարացդ մերոց ողջոյն շատ (անդ, 392):

Շարահասութիւնը (այդ թվում՝ պարզ հարադրութիւնը) ստորոգման արտահայտման միջոց է²²: Գրաբարում անվանական կառույցներ կան՝ պարզ հարադրութեամբ, որոնք միակազմ (նաև երկկազմ) նախադասութիւնների բովանդակութիւն ունեն, նայած թե ինչպես են մեկնաբանվում: Հիշենք Խորենացու «Ողբ»-ի դատաւորք տմարդիք և նման կառույցները: Սա կարող է նըշանակել դատավորները տմարդի են և տմարդի դատավորներ. առաջին իմաստով կլինի երկկազմ նախադասութիւն՝ զեղչված ստորոգյալով, երկրորդ իմաստով՝ միակազմ նախադասութիւն:

Երբ խոսվում է նախադասութեան կառուցվածքային խմբերի մասին, անշուշտ, նկատի են առնվում գրաբարում հաճախակի հանդիպող ինքնատիպ կառույցներ՝ կազմված անուն բառով, որոնցից շատերը նախադասութիւններ են, մի մասը՝ նախադասութեան անդամ (հմմտ. Ապա որդի մի Վահանայ անուն Սամուէլ եհար (Բ., 276):

Այսպիսի կառույցները, բացի շարահյուսական առանձնահատկութիւններից, ոճական ուշագրավ արտահայտութիւններ են:

Բերենք համանման օրինակներ Խորենացուց [ՀՀ, 7 (1), 142—143] և Բուզանդից [ՀՀ, 3-րդ (1), 102—104], որոնք հասկանալի են անգամ առանց բացատրութիւնների:

ա) Որ դերանվան սեռ.→անուն→հատուկ անուն՝

որոյ անուն Եպիփանոս (143),

որոց անուանք Սափարիայ և Ազարիայ (143):

բ) Որ դերանվան տրակ.→անուն→հատուկ անուն՝

որում անուն Գնել (103),

որում անուն Մրջինիկ (103),

որում անուն զլխատրին Մարի (103):

գ) Մի թվ., երկուորդ թվ., միւս դեր., երէց գոյ. տրակ→անուն→հատուկ անուն՝

միումն Զիկ անուն (103),

անուն միում Շաղիտա (103),

անուն միումն Մանուէլ, և անուն երկրորդին Կոմս (103),

երկրորդին անուն Եփիպան (104),

անուանք նոցա միումն Բարիկ, և միւսումն Սամ, միւսումն Վաղինակ (104),

անուն երիցուն Արշակ (103):

դ) Որ դեր., մի թվ., միւս դեր. տրակ.→անուն—հատուկ անուն→էջ, կոշել (կոշէր, կոշիր, կոշին, կոշեցելոյ), ճանաչել (ճանաչէր, ճանաչեմ)՝

տրում անուն էր Փաւստոս (103),

տրում անուն էր Շաբիթ (143),

միումն անուն էր Սարգիս ի նոցենէ (103),

որում անուն Եզնիկ կոշէր (143),

որում անուն Սոփի կոշէր (142),

որում անուն Վարդան կոշիր (103),

²² Տե՛ս ակդ, էջ 31:

Գառնիկ անուն կոչեցելոյ (142),

որում ներսէս անուն ճանաչէր (143),

միումն անուն ճանաչէր Գնել և միւսումն անունն Տիրիթ (104):

Ե) անուն—նանաչել (եզ. 1-ին դեմք)՝ առանց տրականի՝

Օրինակ՝ Եւ զայս Բիրասպեայ հաւաստի անուն նանաչեմ ես Կենտաւոսս Պիւտիդայ (143):

զ) անուն—լինել—հարաբերական դերանվան փոխարեն ցուցական դերանվան տրականը՝

Օրինակ՝ Ածուղ անուն լիցի սմա մինչև ցյալիտեանս ժամանակաց (102):

Նախադասութեան այսպիսի խմբավորումները վերջնական և ամբողջական չեն, որովհետև նրա կառուցվածքային բազմազանութիւնները հիմք են տալիս ենթադրելու, որ էլի կան խմբեր կամ ենթախմբեր, որոնց առկայութիւնն, անշուշտ, կարևոր է նախադասութեան շարահյուսական համակողմանի քննութեան համար:

Ներկայացված խմբերի ձևական զուգադրումն իսկ հուշում է, որ հին հայերենում խոսքի արտահայտման բազմազան միջոցներ կան, որոնց մասնագիտական ուսումնասիրութիւնը եղել և մնում է հայ լեզվաբանութեան, քերականագիտութեան կարևոր խնդիրներից մեկը, քանի որ դրանք այլ բան չեն, եթե ոչ հայերենի տվյալ շրջանի որակական ու հանգուցային մի շերտ՝ շարահյուսական բազմաթիվ պարզ, ինչպես նաև բարդ երևութիւններ պարզաբանելու, բնութագրելու հարմար կայուն ատաղձ:

Վերոհիշյալ 13 կետերից ոչ մեկը մյուսի կրկնութիւնը չէ. ավելին՝ ամեն մեկը շարահյուսական առանձնահատկութեամբ հակադիր է մյուսներին. ներբանցից յուրաքանչյուրն ինքնատիպ կառույց է՝ քերականական որոշակի բովանդակութեամբ և համապատասխան ձևով:

Համառոտագրութիւններ

Ազ.— Ազաթանդեղոս, Հայոց պատմութիւն, Եր., 1983:

Բ.— Փափստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Եր., 1987:

Ե.— Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր., 1989:

Եզ.— Եզնիկ Կողբացի, Եղծ ազանդոց, Եր., 1994:

Խ.— Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, Եր., 1981:

ՄԵՆ.— Գիրք ծննդոց (բննական բնագիր), Եր., 1985:

Կ.— Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ Թարգմանչի, Թիֆլիզ, 1913:

ՀՀ.— Հայկական համաբարբառ, Եր.,

1-ին՝ Եզնիկ Կողբացի (1972),

3-րդ (1-ին)՝ Բուզանդ (1974),

7-րդ (1-ին)՝ Մովսէս Խորենացի (1975):

ՂՓ.— Ղազար Փարպեցի, Հայոց պատմութիւն և Թուղթ Վահան Մամիկոնյանին, Եր., 1982:

ՆՀՂ.— Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2-րդ, Եր., 1981:

Ստ. Մալխասյանցի համառոտագրութիւնները

Առակ.— Առակք Սողոմոնի (Սուրբ գրքից):

Պիւ.— Գիրք պիտոյից:

Э. С. МКРТЧЯН—Особенности структуры предложения в грабаре.—В статье рассматривается одно из важнейших проявлений предложения—его структурная сторона в грабаре. Выделяется 13 структурных предложений. Предложения группы а имеют приемлемую, употребительную, можно сказать, обычную структуру. Предложения других групп характерны для грабара и отчасти среднеармянского языка. Особенности проявляются в употреблении основного (экан) и однокличных глаголов, неопределенной формы глагола, прошедшего причастия, относительного местоимения, артикля, что очень важно для изучения вопросов синтаксиса,